

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«-----» ----- 2018 թվական N -----Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N 796-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանված կարգի 6-րդ, 8-րդ ու 9-րդ կետերի և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի «Կրթության և գիտության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող մի շարք քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին» N 796-Ա որոշման N 2 հավելվածի 62-րդ կետում « Սարգսյան Սարգիս Արտյոմի 02.09.1996 թ.Երևան, Արզումանյան 19/6 ԵՊՀ» բառերը և թվերը փոխարինել «Զուրաբյան Ալբերտ Մարատի 11.05.1997 ՀՀ Տավուշի մարզ, քաղ. Իջևան, Բլբուլյան 84/26 ԵՊՀ» բառերով և թվերով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 796-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման ընդունումը պայամանավորված է Ալբերտ Զուրաբյանին մագիստրատուրայում ուսանելու համար տարկետման իրավունք ստացած քաղաքացիների անվանացանկում ընդգրկելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը

<<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն՝ գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով: ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանել են գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները: Կրթության և գիտության նախարարի հրամանով ձևավորված հանձնաժողովի կողմից, ի թիվս այլ քաղաքացիների, գնահատվել են նաև Ալբերտ Զուրաբյանի գիտության և կրթության բնագավառում ունեցած նշանակալի նվաճումները՝ 61 բալային միավոր, և նրան տրվել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի հավակնելու եզրակացություն: Նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիների անվանացանկը, ովքեր ստացել են տարկետման իրավունքի հավակնելու եզրակացություններ, հրապարակվել է Կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքում /<http://edu.am/index.php/am/events/view/1729/> և ներկայացվել է պաշտպանության նախարարություն:

<< կառավարության հուլիսի 19-ի N 796-Ա որոշման N 2 հավելվածի շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2018 թվականի ամառային զորակոչից մինչև 2020 թվականի ամառային զորակոչը /մագիստրատուրայում ուսանելու համար/ տարկետում ստացած քաղաքացիների անվանացանկում տեխնիկական պատճառներով չի ընդգրկվել

Ալբերտ Մարատի Ջուրաբյանը, մինչդեռ 62-րդ և 66-րդ կետերում կրկնվում են Սարգիս Արսյունի Սարգսյանի տվյալները:

Նախագծում առաջարկում է N 2 հավելվածի 62-րդ կետում « Սարգսյան Սարգիս Արսյունի 02.09.1996 թ.Երևան, Արզումանյան 19/6 ԵՊՀ» բառերը և թվերը փոխարինել «Ջուրաբյան Ալբերտ Մարատի 11.05.1997 ՀՀ Տավուշի մարզ, քաղ. Իջևան, Բլբուլյան 84/26 ԵՊՀ» բառերով և թվերով:

3. Ակնկալվող արդյունքը

Որոշման նախագծի ընդունմամբ կապահովվի «Հինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին համապատասխան նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու գործընթացը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 796-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 23-ի N 796-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի ու եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 796-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 23-ի N 796-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ նոր իրավական ակտերի ընդունման կամ գործող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չկա: